

ԷՇԵՐ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

Դ

ՏԱՂԱՆԴԱԽՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ-ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ՏՐԴԱՏ

10րդ Դարի երկորրդ հետին հայկական ճարտարապետութիւնը գար-
դանում է Շիրակում, բայց առանձնապէս նշանակալից նուաճումներ է անում
Բագրատուննեաց մայրաքաղաք՝ Անիում, որի ժամանակին, որպէս ճարտա-
րապետական արուեստի մի հոյակապ թանգարան, մեծ հռչակ է վայելում:

Անիի ճարտարապետական զանձարանի գեղեցկութիւններից մեղ խոր
հիացմունք են պատճառում Առաքելոց, Փրկիչ և Հոգուի եկեղեցիները, Մար-
տաճարը, Գագկաչէն տաճարը եւ արքայական բազմայարկ պալատը՝ իր գե-
ղեցիկ զննեքրով:

Ճարտարապետական սքանչելի կոթողներ են նաեւ Ախուրեան գետի
հոյակապ կամուրջը, բազմաթիւ իջևանները (քարտանսարանները) եւ ջրմու-
ղը (խողովակ), որի նմանը չենք տեսնում միջնադարեան Հայաստանի միւս
քաղաքներում:

Անիի եւ Շիրակի ճարտարապետական մի շարք բուշարձանների կա-
ռուցման համար պարտական ենք մի մեծատաղանդ արուեստագէտիք: Դա ան-
դուզական ճարտարապետ-քանդակագործ Տրդատն է:

Նա մէկն է այն նշանաւոր արուեստագէտներից, որ իր ամբողջ
կեանքը նուիրել է հայկական ճարտարապետական մշակոյթի զարգացմանը
եւ իր գեղարվեստական զործունէութեան շրջանում կերտել այնպիսի հոյա-
կապ յուշարձաններ, որոնք վկայում են ճարտարապետական արուեստի գծով
նրա կատարած նուաճումների եւ վարպետութեան մասին:

Վաստակաւոր արուեստագէտի մասին մատենադրական ազգիւրնե-
րում եւ վիմական արձանագրութիւններում կենսագրական տեղեկութիւնները
շատ քիչ են: Նրա մասին յիշատակում է պատմիչ Ստեփանոս Տարօնեցի Ա-
սոզիկը, որից երեսում է, որ նա ապրել եւ ստեղծագործել է 10րդ Դարի
երկորրդ կետում եւ 11րդ Դարի սկիզբունութեան է, երբ Բագ-
րատունեաց մայրաքաղաք Անիում, Հայ ճարտարապետութիւնը, շնոր-
հիւ տիրող բարենպաստ պայմանների, նշանակալից նուաճումներ է ա-
նում եւ ապրում իր զարգացման վայլուն շրջանը: Կառուցւում են բազմա-
թիւ եկեղեցիներ ու վանքեր, պալատներ, թատրոն, իշխանական տներ, պա-
րիսպներ, կամուրջներ, բոլորն էլ հայկական ճարտարապետութեան ոճով:

Այդ պատմաշրջանում մեծատաղանդ Տրդատը նշանակում է Բագ-
րատունիների պալատական ճարտարապետը եւ իր ինքնուրոյն հոյակերտ ըս-
տեղծագործութիւններով՝ հանդիսանում է ժամանակաշրջանի ճարտարապե-
տական մշակոյթի լաւագոյն, առաջնակարգ արտայայտիչը եւ բարձր պա-
հանում Անիի ճարտարապետական արուեստի հմայքը:

Ըսդդեմնք եւ այն, որ նրա կերտած հոյակապ յուշարձանները, իբևոց բարձր արուեստով ու ոճով եւ ինքնատիպ կառուցուածքով ճարտարապետա- լան մշակոյթի թանկագին կոթողներ են, որոնք արժանացել են թէ՛ հայ եւ թէ՛ տարա արուեստագիտների բարձր գնահատութեանը:

ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒԹԻՒՆՆԵՐԸ

Արգիմայի Տաճարը: Բազմավաստակ արուեստագէտ Տրդատի ճարտարապէտական առաջին յուշարձանը Արդիմայի Տաճարն է, որ կառուցել է 987 թուականին, Խաչատուր կաթողիկոսի (972 - 991) օրով:

Յուշաբճանի գեղարվեստական արդէքը Վ. Յարութիմեանը գնահատել է յայսպէս. «...Ոչ մեծ չափերի եկեղեցական այդ շինուում Տրդատը փորձել է վերաբարդել գենեւա Նախառարարական շրջանում մշակուած եկեղեցական շինուում տիպերից մէկը՝ «գմբէթաւոր սրահԸ»՝ որի լաւագոյն օրինակները Դրդ Դարի Պաղնիի եւ Արուճի տաճարներն էին ... Արգինայի Տաւարում, յատկապէս նրա ներքին տարածութիւնը կազմակերպելիս, Տրդատը ցուցաբերել է ստեղծագործական ինքնուրոյնութիւն, մօտիւներ մտցնելով, որոնք նրա հետագայ աշխատանքներում աւելի կատարելագործուելով, դարաշրջանի համար դառնում են յատկանշական: Մենք նկատի ունենք զմբէթակիր որմնամոյթերի ուղղաձիգ մասնառումը սիհնափնջերով, ինչպէս եւ երկկենտրոն կամարների կերպառումը, որոնց չնորդչիւ եկեղեցու ներքին տարածութիւնը զարգէլ է աւելի սլացիկ:

Այնուհետեւ ճարտարապետին տեսնում ենք Անիում, ուր նա կառացում է նոր կոթողներ :

Անիկի Մայր Տամաքը : 10րդ Դարի վերջին Անիկի ճարտարապետական գոնձարանի ամենանշանաւոր եւ բարձրագույնս ստեղծագործութիւնների մէջ հիացմունք է պատճառում մի թանկադին կոթող : Դա հռչակաւոր ճարտարապետ Տրդատի կերտած Անիկի Մայր Տաճարն է, որի ճարտարապետական գեղեցկութիւնը շատ բարձր են գնահատել անուանի ճարտարապետ Թորոս Թորամանեանը, գիտնական-քանասսէր Նիկողայոս Մաոը, Հ. Ստըրչիկովսկին եւ այլ արտեստագէտներ :

Տաճարի կառուցման հետաքրքիր պատմութիւնը ճարտարապես Վ. Յարութիւնեանն արձանագրել է այսպիսի ուշագրաւ տողերով. «Արգինայի Տաճարի կառուցումն աւարտելուց յետոյ, Մբրատ Բ թագաւորի (977 - 989) պատուէրով Տրդատն ստանէնում է Բաղրատունեաց ժայրաքաղաքի զվարուր Ս. Աստուածածին եկեղեցու կառուցումը։ Դեռ եւս նոր էր Հիմնադրուել Մայր Տաճարը, երբ որոշ ժամանակ անց՝ 989 թուի ձմբանը, վախճանւում է պատուիրատուն, որի պատճառով էլ շինարարութիւնն ընդհատուում է, իսկ ինըը Տրդատը մի առամանակ Գեռանում է Հայաստանից եւ ապրում Պոլսում։ Տարիներ անց, Կոստանդնուպոլիսից վերստին Հայրենիք վերադառնալով, նա Մինեաց Վասակ թագաւորի գուստը եւ Գաղիկ Ա. թագաւորի կին Կատրանից (Կադրամիտէ) թագուհու պատուէրով վերսկսում է Անիի Մայր Տաճարի ընդհատուած շինարարութիւնն ու այն աւարտում 1001 թուականին ... Թէև Անիի Մայր Տաճարը հարազատօրէն վերաբարտադրում է դեռ եւս Դրդ Դարում մշակուած «գմբէթաւոր բազիլիկա» կոչուող եկեղեցու տիպը, (որի նախաւարարական շրջանի լաւագոյն օրինակները կիմիածնի, Գայիանէ,

Մրէնի: Օձունի ու Բագտաւանի տաճարներն են), սակայն նրան յատուկ են ճարտարապետական որոշակի նոր յատկանիշները ... Որքան էլ ուշագրաւ լինի Մայր Եկեղեցու արտաքին ճարտարապետութիւնը, այնուամենայնիւ Տրդատի նոր խօսքը ամբողջ ճայնով հնչել է նրա ներքին ճարտարապետութեան մէջ» :

Կանք առնենք նաեւ ճարտարապետ Ս. Մնացականեանի ստորագրած Հետեւեալ սեղմ տողերի վրայ. «. . . Եր 961 թուականին Բագրատունից մայրաքաղաքը փոխադրուեց Անի, նրանից ոչ հեռու գտնուող Արդինա աւանում Տրդատն էր, որ կառուցց կաթողիկոսական պալատը եւ նրան կից Եկեղեցին: 989 թուին Մմրատ արքայի յանձնարարութեամբ Տրդատը ձեռնարկեց Անիի Մայր Տաճարի շինարարութեամբ՝ հայկական ճարտարապետութեան ամենաշահաւոր կառուցումներից մէկն առևասարակ» :

Անիի Ս. Գրիգոր (Գագկաշնի) Տանարքը: Անիի ճարտարապետական այս նշանաւոր յուշարձանի կառուցման համար պարտական ենք Տրդատ ճարտարապետին, որ պատրաստել է Գագկի Ա. Բագրատունի թագաւորի պատուիրով: Մատենագրական աղբիւրներից համաձայն թէեւ արքան անուանի արուեստագէտին պատուիրում է տաճարը կերտել Զուարթնոցատիպ, Դրդ Դարի Հռչակաւոր Զուարթնոց Տաճարի յատակադային օրինակով, բայց նա ոչ միայն նոյնութեամբ չի ընդօրինակում, այլեւ կառուցում է ժամանակի ոգու եւ ոճի համաձայն, հանդէս է բերում նոր մօտեցում եւ «Եկեղեցական կոթողին վայել յատկանիշներ» :

Վաստակաւոր ճարտարապետ Տրդատի ստեղծագործական այս կոթողներն իրենց բարձր արուեստի խորութեամբ եւ բանաստեղծական գեղեցկութեամբ՝ ճարտարապետական գոհարներ են եւ Հայ մշակոյթի պատմութեան մէջ առանձնայատուկ տեղ են գրաւում: Այդ յուշարձաններում նա ձկտել է ոչ միայն առաւել ցայտունութեամբ պատկերել հայկական ոճը, այլեւ կերտել բարձրարուեստ կոթողներ, միաժամանակ հիմք է գրել ճարտարապետական մի նոր, ինքնուրոյն ոճի եւ հասել է բացառիկ արդիւնքների:

Կ. Պալսի Այա-Սոֆիա Տանարի գմբէրի վերականգնումը: Տաղանդաւոր ճարտարապետի ստեղծագործութեան պատմութեան էջերը չեն սահմանափակւում ընդգծուած յուշարձաններով: Պատմագիր Ստեփանոս Տարօնեցի Ասողիկը նրան է վերագրում մի բացառիկ կոթողի վերակառուցումը: Դա Կ. Պոլսի աշխարհառչական Այա-Սոֆիա Տաճարի երկրաշրժից աւերուած գմբէթի վերականգնումն է, որը Յոյն ճարտարապետներն երկար տարիներ չէին կարողացել վերացինել: Բիւզանդական կայսեր յանձնարարութեամբ արուեստագէտ Տրդատը չ'որ տարուայ ընթացքում նորոգում է զըմբէթը, որը վարպետ ճարտարապետների վկայութեամբ՝ աւելի հոյակապ է: Արդարեւ, այդ կոթողի կառուցումից մօտ հազար երկար տարիներ են անցել, բայց գմբէթը մինչեւ օրս էլ կանգուն է. մի երեւոյթ, որը վաստակաւոր ճարտարապետի կառուցողական արուեստի պատմութեան մէջ նշանակալից տեղ է գրաւում եւ նրան պատիւ բերում:

Բագմավաստակ ճարտարապետի ստեղծագործական արուեստի հիմնական էջերը պատկերելիս, արձանագրենք հայկական ճարտարապետութեան պատմութեան մէջ տիրող այն ենթագրութեան մասին, որ նա իր ջերմ մասնակցութիւնը բերել է նաեւ Մարմաշնի, Հաղբատի ճարտարապետական գեղեցկութիւնների կառուցմանը: Անիում նա մեծ ջանքեր է գործադրում նաեւ աշխարհիկ շինութիւնների պատրաստութեան համար: Դա այն ժամա-

նակարչանն է, երբ Անիում ջինարարական աշխատանքներն առանձին փայլ են պատճում: Տրդատը, որպէս Բագրատունեաց արքունի ճարտարապետ, նշանակում է ընդհանուր ղեկավար:

Անիում կառուցուած մի շարք յուշարձաններ վկայում են ո՛չ միայն մեծատաղանդ Տրդատի ճարտարապետական փայլուն վաստակի, այլեւ արք ու եւստի սիրով համակուած նրա ստեղծագործական խոր ապրումների, դիտական լուրջ եւ բազմակողմանի պատրաստութեան, համբերատար, բեղմանւոր եւ հետեւողական գործունէութեան մասին:

Տրդատի ճարտարապետական արուեստին պատիւ են բերում նաեւ Շիրակում կառուցած բազմաթիւ եկեղեցիներն ու հասարակական մի շարք չչեքերը:

Որպէս հանճակագրոք: Ճարտարապետ Տրդատն իր դարաշրջանում փայլել ու հոչակուել է նաեւ որպէս տաղանդաւոր արձանագործ: Այդ մասին է վկայում Ս. Գրիգոր (Գագկաչն) եկեղեցու պեղումների ժամանակ գտնուած Գագիկ Բագրատունի արքայի քարակերտ հոյակապ արձանը՝ տաճարի մօքէլլ ճեռքին: Այդ գեղեցիկ քանդակը, որ համարւում է միջնադարական հայաստանի քանդակագործական արուեստի բացառիկ եւ թանկագին մնացորդներից մէկը, մի շարք ճարտարապետների վկայութեամբ՝ ճարտարապետ Տրդատի քանդակած յուշարձանն է:

Տաղանդաւոր գիտնական Մառն արձանի պատկերը գծել է այսպէս: «Արձանն եղել է ներկուած, հագուստը եւ երեսը կարմիր, մօրուքը եւ բեղերը՝ սեւ, չալման՝ սպիտակ եւ թեւքերի եղորերը՝ սպիտակ: Գլխի չալման՝ ըստ երեւոյթին, պէտք է դիտել որպէս այն թագը, որով պսակում էին արարական խալիքաները Բագրատունեաց Թագաւորներին»:

Ճարտարապետ Տրդատի քանդակագործական արուեստում ուշադրաւ նուանումներ են նաեւ Հաղբատի ապարանքի վրայ կերտած Սմբատ եւ Գուրգէն թագաւորների պատկերաքանդակները:

Թէ ինչպէ՞ս եւ ի՞նչ պայմաններում է ստեղծագործել հայկական միջնադարի այս տաղանդաւոր ճարտարապետը, չկան փաստական տուեալներ, բայց այն կոթողիները, որոնք նաև աւանդ է թողել, միկայում են որ նա մէկն է այն առաջնակարգ եւ բացառիկ Հայ ճարտարապետներից, որ մանրակրիտ ուսումնակիրելով հայկական ճարտարապետութեան բնոյթը եւ խորանալով նրա էութեան մէջ, գիտական հիմունքներով, բաղմաղան ճեւել բով եւ ուրոյն ոնով պահպանել է Հայ ճարտարապետութեան էական առանձնայատկութիւնները, որոնց վրայ է կառուցել իր ստեղծագործութիւնները, դրձնականօրէն լուծելով ազգային ձեւաւրժման խնդիրները:

Նրա ճարտարապետական արուեստի կոթողների բնորոշ յատկանիները հանդիսանում են պարզութիւնն ու բանաստեղծական պատկերատրութիւնը, ոճի կատարելութիւնն ու խորութիւնը եւ ձեւերի նրբերանդաւորումը:

Թերեւս այդ էական երեւոյթներով պիտի բացատրել, որ վաստակաւոր ճարտարապետի կերտած կոթողները ճարտարապետական մշակոյթի թանկագին յուշարձաններ են եւ արուեստագէտներին գեղարդուեստական բարձրագոյն հաճոյք են պատճառում:

Եղբարփակում: Գեղարդուեստական բարձր արժանիքներով օժտուած վաստակաւոր արուեստագէտ Տրդատն իր դարաշրջանում փայլել է որպէս առաջնակարգ ճարտարապետ: Նա կատարելապէս տիրապետելով ճարտարա-

պետական մշակոյթին՝ Հայ ժողովրդին աւանդ է թողել արուեստի սքանչելի կոթողներ, որոնք հայկական ճարտարապետութեան զարդն են ու պարծանա-ը, որոնց մէջ գեղարուեստական արտացոլումն են գտել. Հայ ճարտարապե-տական մշակոյթի գեղեցկութիւններն ու նրբութիւնները,

Նրա՝ Անդում եւ Շիրակում կառուցած ճարտարապետական կոթող-ներն իրենց լուսթեամբ վկայում են որ նա, որպէս մեծասուազանդ ճարտարա-պետ, իր ամբողջ էութեամբ, իր գեղարուեստական հայեացքներով ու սկզ-բունքներով և բազմաբովանդակ գործունէութեամբ լաւագոյն պատուանդանի վրայ է գրել իր պատմաշրջանի հայկական ճարտարապետութիւնը: Իր վեհ վաստակով նաև անգնահատելի ծառայութիւն է մատուցել Հայ ճարտարապե-տական մշակոյթին. նա ո'չ միայն նպաստել է այդ արտեստի զարգացմանը, այլ զծել է նրա հետապայ յառաջդիմութեան լուսաւոր ուղին: Այդ վսիմ եւ անմոռանալի աշխատանքն արժանի է ամենաչերմ զնահատութեան:

Ե

ՄԵԾԱՏԱՂԱՆԴ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ-ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ՄԱՆՈՒԵԼ

10րդ Դարի առաջին հէսի հայկական ճարտարապետութեան պատ-մութեան մէջ առանձնայատուկ եւ պատուաւոր տեղ է գրաւում մի այլ ան-ուանի արուեստագէտ: Դա Վասպուրականի Արծրունեաց թագաւորական տան զլիսաւոր ճարտարապետ-քանդակագործ Մանուէլն է, որ խորապէս ուսում-նասիրելով հայկական ճարտարապետութեան առանձնայատկութիւնները, ո'չ միայն մշակել է իր ինքնուրոյն ոճը, այլև հիմուելով նախորդ գարերով ձեռք բերուած գեղարուեստական նուաճումների վրայ, Հայ ճարտարապե-տական մշակոյթը բարձրացրել է զարգացման նոր աստիճանի: Աւելին: Նա մէկն է այն առաջնակարգ Հայ ճարտարապետներից, որը կարողացել է յա-ջողութեամբ լուծել հայկական ճարտարապետներից, որը կարողացել է յա-ջողութեամբ լուծել հայկական ճարտարապետական ստեղծագործութեան ազգային ոճի հարցը, նշել է նրա զարգացման ուղին եւ կերտել է բարձրար-ուեստ եւ մեծարժէք յուշարձաններ:

Թէ արուեստի ս՞ր գպրոցում եւ ինչպիսի՞ պայմաններում ձեւակեր-պուել է նրա գեղարուեստական կերպարը որպէս ճարտարապետ-քանդակա-գործ, քանի՞ տարի է լուդրէկել նրա ճարտարապետական գործունէութիւնը, դժբախտաբար չկան փաստական ստոյդ տեղեկութիւններ: Գիտենք միայն այն, որ նա ապրել է ստեղծագործել է 10րդ Դարի առաջին կիսում: Դա այն ժամանակաշրջանն է, երբ տնտեսական կենաքի զարգացումը եւ անակալից դեր է կատարում Վասպուրականում ծաւալուող շինարարական մեծ աշխա-տանքների վրայ:

Պալատական պատմիչ Թովմա Արծրունու վկայութեամբ Վասպու-րականի իմաստուն, խուռոն եւ շինարար Գաղիկ Արծրունի թագաւորը (908-931) օժտուած լինելով բարեզարդութեան բացառիկ ձիքով, Վան եւ Ռոտան քաղաքներում մեծ շինարարական գործունէութիւն է ծաւալում: Այդ պատ-մաշրջանում մեծասուազն ճարտարապետ Մանուէլը, Գաղիկ արքայի հը-րամանով Վասպուրականում, յատկապէս Աղթամար կղզում, կառուցում է ճարտարապետական սքանչելի կոթողներ՝ Աղթամարի Ս. Խաչ վանքը, նա-ահանգիստը, ինչպիս նաև արքայական պալատներ, եկեղեցիներ, որոնք

իրենց պարզ բայց գեղարուեստական կատարեալ ձեւերով ճարտարապետած կան արուեստի տարրեր գեղեցկութիւններ են եւ խօսում են ամէն մի արուեստաչէրի սրտի եւ հոգու հետ:

Աղթամար կղզին գտնւում է Վանայ լճի Հարաւային մասում։ Ա. Դարում (մ. թ. ա.) պատկանում էր Ուրարտական ծագում ունեցող թշումնեաց նախարարական տոհմին։ Հետազայում, Վասպուրականի թագաւոր Գաղիկ Արծրունին, բարձր զնահատելով կղզու անմատչելի դիրքը, նոր կառուցումներով ծաղկեցնում է Աղթամարը. կղզին ո'չ միայն աւելի է լայնացրնում, այլ եւ շրջապատում Հսկայական ամրարտակով (թումբ, պատճէ), ապա պարիսպով։

Աղթամարի շինարարական այդ աշխատանքները զեկավարում է ճարտարապետ Մանուէլը։ Պատմիչը նուիրել է այսպիսի զնահատական տողեր Մանուէլին։ «Այր լի իմաստութեամբ եւ զօրաւոր ի դործս իւր»։

Ս. Խաչ Եկեղեցու ճարտարապետական գեղեցկութիւնը բարձր են զնահատէլ բանասէններ այսպիսի տողերով. «Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին Հայոց ճարտարապետական արուեստի Հրաշալիքն է, ուր Հայ հանճարը իրեն լաւգոյնը դրսեւորել է. . . . Նրա որոշ մասերի վրայ կարելի է գտնել օտար ազդեցութիւններ, որոնք, սակայն, ազգայնացուել են եւ երրեք չեն խանգարում ընդհանուր ներդաշնակութիւնը։ Նկատի առնելով, որ Ս. Խաչ տաճարի շինութեան համար աշխատել են թէ՛ Գաղիկ արքան, ե՛ւ իշխաններ, ե՛ւ Եկեղեցականներ, ե՛ւ աշխարհականներ, ե՛ւ աղոնուակրններ, եւ թէ՛ Հասարակ ժողովուրդը, կարելի է անվարան նրան հռչակել իր Հայ աղջի հաւաքական ձգտումների եւ ջանքերի մէկ հրաշակերտը՝ ճարտարապետութեան մարզում։ Վերջին տարիներում յատկապիչ»։ Աղթամարի եկեղեցին դրահց ուշադրութիւնը եւ րոպացի եւ Ամերիկացի ճանապարհորդների, որոնք հիացմունքով արտայայտուեցին Հայ ճարտարապետութեան այս փառաւոր կոթողի մասին։

Վաստակաւոր Մանուէլ ճարտարապետի հոյակապ արուեստի մի այլ թանկագին կոթողը, պատմիչը վկայութեամբ, տեսնում էք Ոստան քաղաքի ծովածառոյց վայրում։ Դա շինաղատեսիլ մէ պալատ է, որի գեղեցկութեանն առանձին փայլ են տալիս «ընդարձակ նկարագրադ» եւ լուսաւոր դաշլիճները, բագմաթիւ սենեակները, որտեղից հիմնալի տեսարաններ են բացում դէպի հեռաւոր հորիզոններն ու լճի ծփացող ջրերը» (Ստ. Մնացականնեան)։

Որպես հանդակագրծ։ Աղթամարի Ս. Խաչ տաճարի գեղեցկութեանն առանձին փայլ է տալիս Գաղիկ Արծրունի թաղաւորի արձանը։ Դա միջնադարի Հայ քանդակագործական արուեստի գուհար է, որը միայում է, թէ ճարտարապետ Մանուէլն իր դարաշրջանում հռչակուել է նաև որպէս տաղանդաւոր քանդակագործ։ Արձանն ունի նաև աղղակալան արժէք։ Հայոց արքան կանգնել է ամրող Հասակով, ծիրանին հագին եւ տաճարի մօդէլը, ասես, մատուցում է իր զիմացը կանգնած Քրիստոսին։

Քանդակագործական արուեստի ուշագրաւ ստեղծագործութիւններ են նաև տաճարի արեւելեան ճակատի բարձրագանդակիները, որտեղ ցոլանում են Գաղիկ արքան եւ իր երկու իշխանացուն որդիները՝ խնջոյքի նստած խաղողի այրում։ Զափազանց տպաւորիչ են եւ խօսուն նաև բերքահաւաքը, որոի տիսարանները, մարդկանց եւ կենդանիների՝ դայլի, մարտղի, տոււծի, եղնիկի, նապաստակի բարձրագանդակիները։

Ի՞նչ են ընդգծում տաղանդաւոր ճարտարապետ-քանդակագործ Մանուէլի ստեղծագործութիւնները։ Այն, որ նրանք իրենց բարձր արուեստու,

բովանդակութեան խորութեամբ, ձեւերի կատարելութեամբ եւ ոճային առանձնայատկութիւններով միջնագրարի Հայ ճարտարապետական մշակոյթի սքանչելի կորողներ են եւ վկայում են, որ ճարտարապետութիւնն ու քանդակագործութիւնը եղել են նրա հութիւնը եւ նա ամէն կերպ աշխատել է պահպանել հայկական մշակոյթի հարազատութիւնը: Առհասարակ 10րդ Դարի հայկական ճարտարապետութեան ինքնուրոյն արուեստի եւ ոճի առանձնայատկութիւնների ուսումնասիրութեան համար Մանուէլի կառուցած յուշարձանները ճարտարապետական մշակոյթի թանկագին գոհարներ են, որոնք արդիւնք են արուեստուգէտի վարպետութեան եւ գրսեւորում են նրա կատարած խոշոր դերը ճարտարապետական մշակոյթի զարգացման պատմութեան մէջ: Նրա կառուցած հոյակերտ յուշարձաններով կարող է պարծենալ ամէն մի լուսաւոր, առաջադէմ եւ արուեստահրէ ժողովուրդ:

9

ՍԵԼՉՈՒԿ-ԹԱԹԱՐՆԵՐԻ ԱԽԵՐԱԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

11րդ Դարում Հայաստան են ներխուժում Սելջուկեան հորդաները եւ սոսկալի աւերածութիւններ կատարում. նրանք կործանում են ոչ միայն Հայաստանի ծաղկած քաղաքները եւ գեղեցկաչէն Անին այրում, այլև անխնայ կոտորում են ժողովրդին, իսկ զերիներին անասելի տանջանքներով ըսպանում: Այդ մասին է վկայում 11րդ Դարի ողբասաց Արիստակէս Լաստիվերտցու աւանդ թողած գրքոյնը, որ պատմական մեծ արժէք է ներկայացնում: Նա իրեւե ականատես Սելջուկ-Թաթարների գործած զարհուրելի վայրագութիւններին ու աւերածուներին, նկարագրել է այսպիսի խոր կոկիծով. «Այնտեղ էր տեսնելու ցաւայի եւ արտասուքի արժանի տեսարան. որովհետեւ ժողովրդից նրանց, որոնց ձեռք էին բերում, սրով էին սպանում. որոնք քարքարոս տեղին էին մտնում եւ ամրանում, նետերով էին խոցոտում ու սպանում, ... ու նրանց դիմաները, փայտահատների կոյտերի նման, գլորելով, իրար վրայ գիղած՝ ձորն էին լցնում: Վայ եւ աւաղ այն օրուայ լուսնին ... Հայրը մոռացաւ որդոց գութը, եւ մայրը՝ նորածին մանուկների սէրը: Այնտեղ չէր կարող միութը բերել նոր հարսը՝ փեսայի սէրը եւ ոչ այրը՝ իր ամուսնու գեղեցկութիւնը. պաշտօնեաների երգերը պակսեցան Խիստ տաղնապից՝ յշի կանայք զիժում էին եւ այսպէս ըոլորը, որորդների ուռկանով թակարդուածների նման, իիստ շրջապատուել էին, մինչեւ որ ամէնքն էլ թուլացան եւ ընկան...»:

Կապնել ենք 12րդ դարաշրջանում, որ Հայ գրականութեան մէջ մի դարագլուխ է կազմում: Դա Ռուբինեանց իշխանութեան պատմաշրջանն է, երբ հռչակ են վայելում բանաստեղծներ ներսէս Շնորհալին եւ ներսէս Լամբոնացին ու պատմադիր Մատթէոս Ռւուհայեցին: Այդ գարի Հայ ժողովրդի պարծանքն են անուանի թէիշ Միթթար Հերացին եւ իրաւարան-օրէնսպէտ Միթթար Գոշը, անգուստական պայծառ դէմքը, որոնց գրական գործունէու-թեան պատկերը կը գծենք մի առանձին ուսումնասիրութեամբ:

ԱՐԱՄ ԵԲԵՄԵԱՆ